

**ՀԱՅԵՐԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԲԵՋԱՆԻՑ:
1988թ. ԿԻՐՈՎԱԲԱՂԻ ՀԱՅԵՐԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ԴԱՍԵՐԸ**

Հրանուշ Խառատյան

Պ.գ.թ.

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Բանալի բառեր-Կիրովաբադ, Ջնաբերդ, հայերի տեղահանություն, ինքնապաշտպանություն, ինֆորմացիոն շրջափակում, պարետային ռեժիմ, Ադրբեջան

1988-1990-ի ընթացքում Խորհրդային Ադրբեջանից հայերի արտամղման և տեղահանության գործընթացը թե ձևով, թե բովանդակությամբ առայժմ քիչ է ուսումնասիրվել: Առավել հայտնի են գործընթացի սկիզբը դրած սումգայիթյան ջարդերը, և 1990-ի հունվարին Բաքվի հայկական ջարդերով՝ հայերի տեղահանման գործընթացի փաստացի ավարտը: Քիչ է ուսումնասիրվել, ի թիվս այլոց, նաև հետազոտողներին մատչելի աղբյուրների պակասի պատճառով: Առավել հայտնի տեղեկությունները վերաբերում են գլխավորապես 1990-1992-ին, մասնավորապես «Կոլցո» օպերացիային, երբ ԽՍՀՄ գրախոսությունից ազատվող և ազատված լրատվամիջոցները կարողանում էին համարյա ամենօրյա տեղեկատվություն հաղորդել Ղարաբաղի հյուսիսի և Շահումյանի շրջանի հայերի ջարդերով ուղեկցվող բռնի դեպորտացիայի մասին: Նույնիսկ 1990ի հունվարին Բաքվում ընթացող հայկական ջարդի մանրամասներն այսօր վերականգնվում են գլխավորապես զոհերի անձնական հիշողություններով:

Պակաս հայտնի են գլխավորապես 1988-ին, մասամբ՝ 1989ի ընթացքում Ադրբեջանի հայկական կամ հայաշատ շրջաններից հայերի արտամղման գործընթացի մանրամասները: Ընդունված է համարել, որ այն կրում էր «կամավոր տեղափոխության» բնույթ, որի ընթացքում Ադրբեջանի զանազան շրջանների քաղաքներում և գյուղական բնակավայրերում ապրող հայերին «կամավոր տեղափոխության» համար շրջանային ղեկավարության կողմից օգնություն էր առաջարկվում, չորս-հինգ ընտանիքին՝ մեկ բեռնատար մեքենա՝ մարդկանց և ընտանիքներին պատկանող որոշ իրեր մինչև Հայաստանի սահման տեղափոխելու համար: Ըստ էության, այդպես էին 1988ի աշնանը Հայաստանից հեռանում ադրբեջանցիները: Չի բացառվում, որ դա Մոսկվայից թելադրված և խորհրդային երկու հանրապետությունների՝ Հայաստանի և Ադրբեջանի կուսակցական իշխանությունների փոխհամաձայնեցված գործողություն էր: «Կամավոր» բառը տվյալ դեպքում նշանակում է՝ մարդկանց այլ ելք չէր թողնված, և նրանք «կամավոր ընտրության» հնարավորություն չունեին: Առավել ևս «կամավոր»ի մասին չի վկայում այն իրավիճակը, երբ մարդիկ ամենօրյա

Ճնշումներից պաշտպանություն չգտնելով, «կամավոր» հեռանալ-փախչելու ելքեր էին փնտրում, ինչը հաճախ է հանդիպում Ադրբեջանից «կամավոր հեռացող» հայ բնակչության անձնական հիշողություններում: 1988ի փետրվարի սումգայիթյան ջարդերը այն կողմնորոշիչն էին, որ հուշում էին, թե ինչի կարող են հանգեցնել ադրբեջանական հեռուստա- և ռադիոէթերային դաշտը հեղեղած սպառնալիքները, հարևան ադրբեջանական բնակչության առանձին շերտերի ու տեղական իշխանությունների ամենօրյա դարձած ճնշումները: Սումգայիթից դաս առած հայերի մի մասը 1988-1989ին իսկապես իրենք էին Ադրբեջանից հեռանալ-փախչելու ելքեր փնտրում: Որոշ վերապահումով սա, թերևս, կարելի է «կամավոր» անվանել: Այս մարդիկ, սակայն, հիմնականում համեմատաբար բարեկեցիկ ապրող և ԽՍՀՄ տարածքում ազգականներ ունեցողներն էին: Ադրբեջանի հայ բնակչության մեծ մասն իրականում այդ հնարավորությունը չունեին, իսկ շատերն ուղղակի չէին ուզում լքել հայրենի տարածքը և տազնապով սպասում էին նոր սկսված կոնֆլիկտի հանգուցալուծմանը կամ իրենց անվտանգության ապահովման խնդրում՝ իշխանությունների միջամտությանը: Նրանք փորձում էին հավատալ, որ Սումգայիթում ինչ որ սխալ է տեղի ունեցել, անհնար էին համարում, որ ԽՍՀՄ իշխանությունները կարող էին թույլ տալ, առավել ևս կազմակերպել քաղաքացիների բացահայտ սպանոց:

1988ի աշնանը վիճակը կտրուկ լարվեց, իսկ նոյեմբերի 20-ից Ադրբեջանի պետական հեռուստատեսությամբ ուղղակի ու բացահայտ քննարկումներ ծավալվեցին թշնամի հայերի, Ադրբեջանում հայերի գոյության աննպատակահարմարության և հայաթափության մասին: Դրան զուգահեռ իշխանության շրջանային մարմինները հանդիպում էին հայկական գյուղերի պատասխանատուների հետ և առաջարկում, համոզում կամ սպառնում անմիջապես հեռանալ Ադրբեջանից՝ երբեմն խոստանալով օգնել հեռանալուն: Որոշ գյուղեր անմիջապես համաձայնեցին, որոշները՝ խոստացան մտածել, երրորդները մերժեցին հեռանալ: Ակնհայտ էր, որ «ի՛նչ անել»ու շուրջ հայերը որևէ ուղղորդող գաղափար չունեին, և նույնիսկ չգիտեին, թե ինչպիսի իրավիճակ է հարևան շրջաններում: Յուրաքանչյուր կոնկրետ դեպք, կոնկրետ բնակավայրի բնակչություն կամ առանձին ընտանիքներ իրենք էին իրենց համար լուծում փնտրում, ամենից ավելի հաճախ փորձելով Հայաստանի ադրբեջանցիների հետ բնակարանը փոխանակելու տարբերակ գտնել: Շուտով պարզ դարձավ, որ այն դեպքերում, երբ հայերը դանդաղեցնում էին տեղափոխությունը, կազմակերպվում էր «արշավ» բնակավայրի վրա, հարձակում, ծեծ ու ջարդ, թալան, ստեղծվում էր կոնկրետ վախի մթնոլորտ, որից հետո շրջովմները սկսում էին վերաբանակցել հայերի հետ՝ խոստանալով հեռանալու դեպքում օգնել նրանց իրենց գույքը տեղափոխելու գործում: 1988-ի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսները հայկական բնակավայրերի բնակչության համար դարձան չափազանց վտանգավոր, ուստի մինչև փոխանակություն կազմակերպելը կամ ապրելու որևէ տեղ գտնելը՝ հայկական բնակավայրերի բնակիչները պահակակետեր էին

սահմանել իրենց բնակավայրերի շուրջը և տղամարդիկ գիշերները հսկում էին գյուղերի բնակչության անվտանգությունը՝ երբեմն-երբեմն ետ մղելով փոքրաթիվ թալանչիական խմբավորումների գրոհերը: Այդպիսի գրոհներ շատ են եղել, որոնցից սույն համառոտ հոդվածում կներկայացվեն մի քանի առավել տիպական օրինակներ:

Դաշքեսան քաղաքի և Դաշքեսանի շրջանի Բանանց և Կուշչի գյուղերում, օրինակ, ըստ բնակչության պատմածի. «Մենք մեր գյուղից՝ Բանանցից, դուրս ենք եկել երկրաշարժից հետո՝ 1988-ի դեկտեմբերի 10-ին: [Մինչ այդ] Վեց ամիս չենք քնել, շորեր չենք հանել, էս երեխեքս պոստերում կանգնած մեծ-մեծ մարդկանց հետ... Էս երեխես 9ը տարեկան էր, մեծ-մեծ մարդկանց հետ պոստ ա կանգնել, էն մեծս էլ 12 տարեկան էր, էլի կանգնել ա պոստ: Մեկը փետով էր կանգնում, որը կացնով էր կանգնում, ով ինչով կարար... մեկը իրենց որսորդական հրացանով էր կանգնում: Բայց հետո իրանց [իշխանությունների] թուրք միլիցեքը եկան, գիտեին, նենց մարդ կար, որ իրանց մոտ գրած էր, որ ունի հրացան, եկան, անուն ազգանունով տանիցը հավաքեցին, տարան: Երևանից վերտալյոտով այլուր էին բերում մեզ, պապիրոս, յուղ, բերում էին իջեցնում հայկական հողամասի տարածքում, որ ժողովուրդը սոված չմնա... Մեր գնալուց հետո գյուղում մի քանի հայեր էին մնացել: Մեկը զոքանչս էր, բռնում են ծեծում, ջահել աղջկերանց բռնում են, կռիսում են ջրի մեջ, որ խեղդեն, երևի մի թուրք խղճով ա եղել, ազատել ա տենց, փախել են, եկել: Էնքան ծեծել են մարդկանց, որ եկան ստեղ մահացան: Քա՞նի հոգի եկան Երևան մահացան: Գյուղսովետի նախագահին բռնել ծեծել էին, պեչատը վերցրել էին ձեռից թուրքերը: Եկավ խեղճ մարդը, ըսկի մի ամիս էլ չմնաց, մահացավ: Շատ էին ծեծել: Ինքն էլ քերծի նման մարդ էր, անունը՝ Սեյրանյան Ստեփան»¹:

«1988թ. նոյեմբերի 23-ին ժամը 21.30 Դաշքեսանում դեմոնստրացիա էր, միտինգ: Հետո Դաշքեսանի Ռուդնիկ ավանում ադրբեջանցիները հարձակվեցին Դաշքեսանի վրա: Ջարդեցին Ղազարյան Ժորայի, Կարապետյան Հովհաննեսի, Մահդեսյան Լևոնի և այլ բնակիչների տները: Շրջկոմի առաջին քարտուղար Իսլամ Սադիխովը, դատախազ Նադի Կուլիևը հայերին զգուշացրին, որ փախչեն... Հաջորդ օրը՝ արդեն [19]88ի նոյեմբերի 24ին, Դաշքեսանի հայերը դիմում են ավանային սովետի նախագահ Ամրանի Էլդարովին, 26րդ համագումարի անվան սովխոզի դիրեկտորին՝ Ֆիզուլի Ջաֆարովին, օգնության համար: Նրանց միջամտությամբ՝ մոտավորապես ժամը 14ի արանքում հայ բնակչության առաջ հանդես է գալիս շրջգործկոմի նախագահ Սիավուշ Ալեկսեյերովը և մի ինչ-որ կին՝ հուսադրելով, որ ոչ մի տեղ չգնաք, որ ոչ մի բան էլ չի լինի, արդեն միջոցներ են ձեռնարկվել: Նույն օրվա 19.00-ին տեղի թուրքերը հարձակվեցին հայերի տների վրա՝ կազմակերպելով ջարդ ու թալան: Նույն

¹ Բանանց գյուղից գաղթած Ռուբիկ և Անո Բեկնազարյանների հետ 08.07.2006 ին զրուցել է Թ. Վարդանյանը:

Ժամին երևում է միլբաժնի աշխատող Էդար Բեգարի, չգիտեմ, ինչովը: Թալանում են Առաքելյան Սերգեյի, Հակոբյան Միխայելի, Բալասանյան Արկադիայի տները: Նույնիսկ լավերի (խուլ ու համբերի-Հ.Խ.) են թալանում: Հաջորդ օրերին նրանք միտինգներ են կազմակերպում իրանց մոտ: Գլխավոր բժիշկ Ասաբ Յուսուպովը հայտարարել է. «Կուշչին մերկացրեք, Չովդարը թալանեցեք: Նրանք ոչ մի բան չպիտի տանեն Էստեղից...»: Մեր հարևան գյուղից մոտավորապես 120, թե շատ ընտանիքներ, (ցուցակն ունեմ) փախել են մեզ մոտ (Կուշչի): Նրանց մեջ էին շրջկոմի երկրորդ քարտուղարը, շրջխորհուրդի նախագահի տեղակալը, որոնք հայ էին... Ուրեմն, նոյեմբերի 21-ից հետո, թուրքերը գիշերը հարձակվում են Վերին Քարհատի վրա: Տվել էին ապակիները, բանը ջարդել: Ասում են, թե մեկ ա, ուզում ենք տները մտնենք: Դե՛, հարևան թուրքեր են լինում, մի կերպ էլ խուժան-մուժանին քշում են, բայց ժողովուրդը փախնում են մոտիկ ձորը... Ու՛ր գնանք, ու՛ր չգնանք՝ որոշում են գալ Կուշչի: Ես էլ կազմակերպեցի կոլխոզ-սովխոզի մեքենաները՝ մի 20-ից ավելի, ուղարկեցի, դրանց իրերը բերեցին մեր գյուղ: Էդ մարդկանց ծեծել էին, ջարդել էին, կապտած եկել էին մեզ մոտ: Էդ մարդկանց էլ վերցրի, բաժանեցի տների վրա: Մի երեխայի վրա տաք-տաք ջուր էին շարտել: Դրա մասին թերթում գրեցին, թե վառված բերեցին, երկու-երեք շաբաթ մեր գյուղում մնաց, մի քիչ բուժեցինք, ու տեղափոխվեցին Երևան: Վերին Քարհատի գյուղացիները մի ամիս մեր գյուղում ապրեցին, հետո աստիճանաբար հեռացան Ադրբեջանից: Ամեն մարդ ինքն իր համար տեղ գտավ»¹:

Ծանր գրոհ է եղել Նախիջևանի Ջնաբերդ գյուղի վրա. «Մումգայիթից հետո մեր գյուղն արդեն պատրաստ էր, որ մեզ էլ են մի օր գալու այդպես անեն: Լույս չկար, լույսերը գիշերները կտրում էին, ժամը յոթից հետո լույս չէին տալիս: Ժողովուրդը, այստեղ-այնտեղ խարույկ վառելով, գիշերը մի կերպ պահում էին գյուղը: Հիմնականում պահում էին գյուղը ջահելները, խմբեր կազմած սարերում էին: Հերթով պահակություն էին անում: Ձենքը ինքնաշեն էին սարքել, մեկ էլ մի երկու մարդ որսորդական հրացան ուներ: Դանակով, փայտով են դուրս եկել առաջները ի՞նչ անեին: Մումգայիթից հետո ոչ կարողանում էինք գյուղից դուրս գալ, ոչ կարողանում էինք հիվանդներին Նախիջևան տանել, մեզ այնտեղ չէին ընդունում, մենք արդեն այնտեղ չէինք էլ գնում. ճանապարհներն էին կտրում, վերադարձնում էին: Լուսոյին, որ տարան, օպերացիա արեցին, բերեցին, բժիշկը՝ Ջաբարը, տարել էր օպերացիան շուտ արել, բերել էր, ասել էր՝ մի թողեք այստեղ, թե չէ որ գան տեսնեն՝ ինձ էլ կվնասեն... Նույն օրն էլ բերել էին: Խոսքադի սեգունին ծեծեցին, չթողեցին խոտ քաղեին, ավտոներից թափեցին ինչ որ կբերեին: Չեմ հիշում՝ Խաչի՞ կի ավտոն էր, ծեծել էին, աղջիկներին թափել,

¹ Կուշչի գյուղից Բոյախյան Սյոմայի հետ ՀՀ Վարդենիսի շրջանի Ծափաթաղ գյուղում 2006ի հունիսին զրուցել է Լ.Խառատյանը:

պաժառ էին տվել, տղաներին ծեծել էին, դրանից հետո ժողովուրդը սկսեց կամաց-կամաց դուրս չգալ: Երեվան - Ջնաբերդ երթուղային ավտոբուսը ճանապարհին գլորել էին, ինչքա՞ն ծեծեցին էդ վարորդին՝ Սերգեյին, մի խելոք մարդ էր: Չի հասցրել մտնել Ղարաբաղլար, այնտեղ արդեն դուրս էին եկել, ծեծել էին, ավտոբուսը գլորել: Ավտոբուսի մեջիններին ծեծել էին: Ով հասցրել էր, փախել էր վիրավորված՝ որի թևը, որի ոտը, որի գլուխը... Գյուղ լուր բերեցին, տղաներով գնացել էին մեքենաներով բերել: Ամուսինս՝ Մկրտչյան Մկրտիչը, վարորդ էր, կթվոր էր տանում սարը: Մի օր էլ թուրքերը դեմը կտրում են, վրեն դանակ պահում, թե՛ էդ կանանց իջացրու: Կողքի Թագա, Խնջաբ, Սուսք գյուղերի թուրքերից էին: Ինքն ասել էր՝ խնդրում եմ՝ ինձ սպանեք, մենակ թե իմ մոտս էդ ջահելներին մի՛ կպեք: Էդ ընթացքում կանայք փախչում են այս ու այն կողմ, ինքն էլ վախից կաթված է ստանում: Դա 88-ի հոկտեմբեր-նոյեմբերն էր: Նոյեմբերի 18-ին էլ Հայաստանից հարս էին բերում մերոնք, Սաթիկենց հարսանքն էր: Ջինվորական մեքենայով էին, մտածել էին, որ զինվորական մեքենան չեն կանգնեցնի: Բայց եկել էին մեքենայի դեմը կտրել, բարձարացել էին մեքենայի մեջ, կին-տղամարդ ծեծել էին, մազերից քաշքշել: Մի կին էլ մահացավ դրանից, Գառնիկի կինը՝ Մանյակը: Ծեծվածներին բերել էին լցրել հիվանդանոցը: Երևանից հարսանիքի հետ մարդիկ էին եկել, դրանց էլ գիշերը ետ վերադառնալիս էին բռնել ծեծել: Նոյեմբերի 22-ի ցերեկը մեր գյուղացի Սարոյին Նախիջևանի տարեց թուրքերն զգուշացրել էին, որ ինչ- որ ջահելների հավաք է եղել, որոշել են այդ գիշեր Ջնաբերդը վերցնել: Գիշերը լույս չկար, ժողովուրդը, խարույկներ վառած, դրսերում էր: Մեկը հավատաց, մեկն ասեց՝ չեն կարող, Գարբաշովը որ չի ընկել, չի մահացել, ո՞նց կարող է իրենք մեզ այստեղից քշեն, պետությունը հո ընկած չի: Մեկը մենք՝ չհավատացինք: Կրակն արել էինք բարձր, կողքը կանգնած էինք, հետո հարսիս հետ տուն մտանք, դու մի ասի՝ գյուղամեջում արդեն բոլորը փախչում են դեպի սարերը, մեքենաները լցրած ժողովրդին տանում են... Դրսից արդեն հարձակումն սկսվեց: Ամեն ինչ էլ դրանք (հարձակվողները-Չ.Խ.) ունեին, դեռ երևի դրանց հետ կար բանակի օգնությունը, որովհետև ցերեկվա ընթացքում բերեցին տանկեր պահեցին, իբր թե գյուղն են պաշտպանում: Դա իրենց կողմից տակտիկա էր, իբրև թե գյուղն են պաշտպանում: Հետո եկավ մեր գյուղ էդ տանկը, բանից պարզվեց, որ ոչ թե մեզ պաշտպանելու համար է, այլ իրենց օգնելու: Բա որ մի հատ էլ հայ տղա կա՞ր (տանկիստների հետ): Էդ հայ տղեն էլ որ էկավ, ասեցինք՝ «ցավդ տանեմ, բա կարո՞ղ է թողես մեր էս հայերին կոտորեն»: Ասեց՝ «Այ մորքուր ջան, ի՞նչ կարամ անեմ, ինձ հրաման չունեմ, ի՞նչ կարամ անեմ, ոչինչ էլ չեմ կարող անել, ավելի լավ է՝ փախեք սարերը, թողեք, գնացեք»: Գիշերվա կեսին ժողովուրդը՝ կին, երեխա, որը ոնց հասցրել են՝ մեքենաները լցրել են, հասցրել սարերը: Էդ որ կողմից, ասում էին, գյուղ պետք ա մտնեին, էնտեղ խաղողի այգիներն էին, ուղղակի մեր տղաները հերոսի պես պահեցին: Եթե թուրքը մտներ էդ այգիների մեջ, գյուղից հաստատ հետք չէր մնա: Էդ այգիներն անցել էին մերոնք, դեմներն

առել էին... Անպատրաստ էինք: Տուն կար, որ նույնիսկ ջահելը փախել էր, պառավին, հիվանդին չէր կարողացել տանել, երեխաները վերցրել էին ու փախել: Գիշերվա կեսին մեզ լցրեցին մեքենաները, սարի ճանապարհներով... ճանապարհ չի իրականում, տակերն անդունդ է, եթե վարորդը վախենա կրակոցից՝ մի սխալ շարժումը կործանում է... թուրքերն արդեն հարձակվել էին, կռվում էին, կրակոցների ձայնը մենք լսում էինք սարի վրա: Գիշերվա 4-ն էր, 5-ն էր՝ հասել ենք Խնձորուտ. դա Հայաստանի առաջին գյուղն է մեր կողմից: Այ այդ գյուղն ենք էկել, էկել ենք հարսիս հերանց տուն: Երևանում սովորող մեր գյուղի տղաները եկան հասան: Գիշերը մենք որ փախչում էինք, տղաները էկան «Ուրալ» մեքենայով: Բայց երկար դիմադրել չկարողացան: Գյուղն այդպես գաղթեց, մեզ գյուղից հանեցին...»¹: Ձնաբերդ գյուղից մեկ այլ կին, փախուստից հետո ՀՀ Եղեգնաձորի շրջանի Նորավան գյուղում հաստատված Լենա Գևորգյանը պատմում է. «Տների փոխանակելը ես չեմ իմանում: Մենք միանգամից դուրս ենք եկել, թուրքերն այնպես էին թափվել, որ մնալ հնարավոր չէր: Մենք բարձրացանք սարերը, իսկ տղամարդիկ մնացել էին՝ գյուղը պաշտպանելու: Մի հատ էլ փոքր էրեխա կար՝ նոր ծնված, հիվանդանոցից հանել էին, բերել: Էդ էրեխեն էլ մեր հետ էր, էն ինչ ձևի էր լացում ամբողջ գիշեր: Լուսադեմին կրակոցները դադարեցին, ոմանք սարից գյուղ վերադարձան: Ես էլ եմ վերադարձել: Բայց այդ դեպքից հետո մեր տղամարդիկ կանանց չթողեցին մնալ, մի օրվա մեջ բոլորին ուղարկեցին Հայաստան: Տղամարդիկ որոշ ժամանակ մնացին, փորձեցին պայքարել գյուղի համար, բայց շուտով բոլորը հեռացան, մնալ հնարավոր չէր: Մարդիկ կային, որ տան գույքը կարողացան իրենց հետ տանել, բայց իմ ամուսնու եղբայրը մահացել էր, մենք թաղումով էինք զբաղված, չկարողացանք իրերը բերել: Հետո ամուսինս գնաց, մեր տանը արդեն թուրքեր էին ապրում: Թուրքի կինը, երեխան գրկին, ամուսնուս ասել էր. «Շուտ դուրս արի տնից, թե չէ երեխայիս կմորթեմ, կասեմ՝ հայն է արել»: [19]88ի նոյեմբերն էր»²:

1988-ի նոյեմբերի 23-ին գյուղացիների համար լիովին անակնկալ հարձակում է եղել Իսմայիլիի շրջանի Քյալբանդ գյուղի վրա. «Եկել են, զենքով մտել են, փոքր մեքենաներով ու ավտոբուսներով: Մարդ չեն սպանել, բայց կրակում էին... Մենք գյուղի ներքևի մասով փախել ենք ձորը: Մեր գյուղում համարյա երիտասարդներ չկային, մեռնող գյուղ էր, բոլորն արտագաղթում էին: Հիմնականում տարեցներ էին: Գյուղում միայն մի քանի մարդ չհասցրեց փախչել, դրանց շատ ծեծել են, տան գույքը ջարդուփշուր են արել: Մենք փախանք այգիները, Վերիշեն գյուղ կար

¹ Ձնաբերդ գյուղից փախստական Ադուն Գևորգյանի հետ Երևանում գրուցել է Լ.Նառատյանը 2006-ի հունիսին:

² Ձնաբերդ գյուղից Լենա Գևորգյանի հետ (Վայոց ձորի մարզ, քաղաք Եղեգնաձոր, Նորավան, տուն 13բ) գրուցել է Լ.Նաչատրյանը 2006-ի հունիսի 28-ին:

այնտեղ, [19]15ի փախեփախի ժամանակ¹ այդ գյուղն ավերել ու հրդեհել էին, մնացել էին ավերակները, Հին գյուղ է կոչվում, գնացինք այդ ավերակները: Այդ զիշեր տղամարդիկ կրակ բերեցին, ծառերի տակ փոքր երեխաներին հավաքեցինք, մի փոքր տաքացանք: Մի կերպ լուսացրինք, բայց սոված ենք, բոլորը փախել էին մի հագուստով, խուճապի մեջ ուտելիք չէինք վերցրել: Առավոտյան ջահելները թաքուն գյուղ գնացին, սներից մի քիչ ուտելիք բերեցին, ջուր բերեցին: Մի քանի օրից հետո մեր շրջանի ղեկավարները եկան, մեզ գտան, թուրքեր են բոլորը, մեջները հայ չկա: Եկել են այդ ղեկավարները, մեզ ասում են՝ «մի վախեցեք, դե՛ ոչինչ, որ եկել են, ձեզ ծեծել են, բայց հո չեն սպանել: Եկեք ձեր գյուղը, մենք մեքենա կտանք, ինչ որ կարող եք՝ վերցրեք, գնացեք Հայաստան»: Հենց այդպես բաց տեքստով էլ ասում էին՝ գնացեք Հայաստան: Ոչ պաշտպանել, ոչ օրենք, ոչ մի բան: Ի՞նչ կարող էինք անել, դեկտեմբերի 1ին գյուղից դուրս եկանք: Մինչև այդ մնացել ենք անտառներում, վախենում էինք գյուղ գնալ: Ինքնաթափ մեքենաներ բերեցին, մի քանի իր ենք վերցրել ու դուրս եկել: Մեզ վրա ճանապարհին հարձակում չի եղել, բայց մեզնից առաջ գնացող ուրիշ մեքենաների վրա Կիրովաբադում հարձակվել են, իրերը թալանել, մարդկանց ծեծել են: Մեր ճանապարհը Կիրովաբադի միջով էր, իսկ այնտեղ հայերի ջարդ էր գնում: Մենք դրանից հետո մտանք Կիրովաբադ, ռուս զենեղներ կային, մեզ պահեցին զիշերը Կիրովաբադում, մեքենաների մեջ մնացինք: Լույսը բացվեց, նոր ասեցին՝ գնացեք: Թե չէ մեր վրա էլ էին հարձակվելու: Բերեցին Իջևանի սահմանին մեզ թափեցին...²: Որոշ ժամանակ անց գնացել եմ մեր գյուղը, տեսնեմ մեր տանը թուրքեր են ապրում: Նոյեմբերյանի թուրքերից էին, Հայաստանից: Ասեցի՝ լավ, գոնե տան փողը սովեք: Մեր տունը շատ լավ տուն էր՝ երկու հարկանի, նոր սարքած, գազը, ջուրը...Մեր գյուղի ամենալավ տունն էր: 4000 քառակուսի մետր միայն այգի էր, 70 հատ նոսն ծառ կար: Ընկույզ, թուզ...Բայց այդ թուրքն ասաց՝ «ես իմ տունը չեմ ծախել, երբ որ կծախեմ, փողը կտամ»: Այդպես 18 տարի է՝ աչքս ճանապարհին է: Ամուսինս էլ մեկուկես տարի հետո մահացավ: Շատ էր վախեցել, սիրտը վախից ճաքել է»³:

Իսմայիլիի շրջանի Ղալազա գյուղից Վաչիկ Թավարյանը պատմում է. «Մեր շրջանի Քյալբանդ գյուղի վրա հարձակվել էին, գյուղացիները փախել, լցվել են

¹ Նկատի ունի 1918թ. ջարդերը: Քանի որ հայոց Ցեղասպանության տարեթիվը՝ 1915թ. գիտակցության մեջ խիստ ակտիվ է, քսաներորդ դարակզբի բոլոր կոտորածների մասին խոսելիս մարդիկ հաճախ ակամա 15թ. են հիշատակում: Շամախու հայ բնակչության ջարդերի մասին տես ՀՀ Ազգային արխիվ, Ֆ. 223, Ց. 1, Գ. 106, թ. 7: Օրիգինալ, ձեռագիր; Ֆ. 278, Ց. 1, Գ. 32, Թ. 23: Պատճե, ձեռագիր: Հրատարակված է «Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918–1920 թթ.», Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, կազմել են Ս.Միրզոյան, Ա.Ղազիյան, Երեւան, 2003, էջ 457, 463–464:

² Հայաստանի և Ադրբեջանի սահմանը:

³ Քյալբանդ գյուղացի Մարգարիտա Ավանեսի Քոչարյանի հետ ՀՀ Արմավիր քաղաքում (Հայրենյաց փողոց, 26) 2006թ. հուլիսին զրուցել է Ա.Հակոբյանը:

անտառները, մի կին նույնիսկ անտառում է ծննդաբերել... Ավտոբուսը թուրքերով լցված հարձակվել են Գիրք գյուղի¹ վրա, որպեսզի բռնի տեղահանեն: Գյուղում Այոշա անունով մարդ կար, որսորդական հրացանից կրակել էր ավտոբուսի վրա, դրանք էլ սկսում են ավտոբուսից կրակել: Այոշան դիրք է մտնում քարի ետևը, բայց վիրավորվում է: Բայց թուրքերը վախենում են, ետ են վերադառնում: Դրանից հետո այդ գյուղի բնակչությունը, մեկ էլ Քյալբանդ գյուղի բնակիչները մի շաբաթից ավել մնում են անտառներում: Իրենց հենց անտառներից էլ տեղափոխեցին, բայց Ղազախում ավտոբուսներից իջեցրին: Ղազախում դրանց ահավոր ծեծի են ենթարկել, և գիրքեցիներին, և քյալբանդցիներին՝ իմանալով, որ էդ դեպքերը եղել են: Մեր գյուղ էլ շրջանի ղեկավարությունից շուտ-շուտ գալիս էին, երկու ամիս համարյա միշտ գալիս - գնում էին: Ռայկոմի քարտուղարը, միլպետը... Գալիս ասում էին՝ «մենք չենք կարող պատասխան տալ ձեր կյանքի անվտանգության համար, իրադրությունը լավ չի: Մենք միայն կարող ենք ձեզ միջև հարևան շրջանը ուղեկցել, որպեսզի դուք դուրս գաք: Մեքենաներ տրամադրենք՝ ինչքան կարողանում ենք, որպեսզի մեր շրջանից դուրս գաք առանց կոնֆլիկտի»: Համարյա մի ամիս գնում - գալիս էին, որպեսզի ժողովրդին համոզեն, հավաքում էին գրասենյակում, համոզում էին դիմում գրել, որ իբր մեր հոժար կամքով բնակչության վայրը փոխում ենք: Դե, ովքեր գրել են, ովքեր չեն գրել: Անձամբ ես չեմ գրել, շատ մարդիկ կան, որ չեն գրել: Արդեն տեսնում ենք, որ Սովետական Միության ոչ մի օրենք չի գործում, ոչ մեկի կողմից ոչ մի օգնություն չենք կարող սպասել: Տեսնելով, որ իրադրությունը շատ է սրվում, նոյեմբերին մեր գյուղում՝ Ղալագայում, ոնց որ կոմիտեի նման մի բան ստեղծվեց, ինքնապաշտպանության համար: Կոլխոզը, քանի որ մեծ տնտեսություն էր մեր մոտ, տեխնիկա ուներ, տրակտոր, բուլդոզեր..., զիջերը դրանցով փակում էինք գյուղ մտնող ճանապարհը և մարդիկ հսկում էին: Որսորդական հրացաններ կային: Շրջկենտրոնից ուզել էին այդ տեխնիկան տանել, բայց մենք չթողեցինք, միայն վերջին պահին ենք դրանք թողել: Մեծից փոքր անցել էինք պաշտպանության, ամեն մարդ գիտեր, թե ինքը երբ և որտեղ

¹ Հայկական Սովետական հանրագիտարանի հ. 3, էջ 89ում կարդում ենք, որ Իսմաիլիի շրջանի Գիրք գյուղում են ծնվել Բաքվի կոմիսարներից Ա.Մ.Ամիրյանը և Թ.Մ.Ամիրովը: Իրականում Թ.Ամիրովը դաշնակցական էր և չէր կարող Բաքվի բոլշևիկ կոմիսարներից լինել: 1918ի սեպտեմբերի 14ին Բաքու թուրք-մուսավաթական համատեղ զորքերը մտնելու օրը հենց նրա նավով են փախել Բաքվի հայտնի կոմիսարները: Այդ մասին հետագայում պատմել է Ստեփան Շահումյանի քարտուղարուհի Օ.Շատունովսկայան. ««Թուրքմեն» ջերմանավում դաշնակ Թադևոս Ամիրովի ջոկատն էր տեղավորվում, իսկ մեր խմբում նրա եղբայր Արսեն Ամիրովն էր, «Բակինսկի ռաբոչի» թերթի խմբագիրը: Նստում են այդ նավը: Մերոնք բոլորը, այդ թվում Միկոյանը: Իսկ մենք՝ երիտասարդներս, քսան հոգի, մնում ենք» («Об ушедшем веке рассказывает Ольга Шатуновская», Составители: Джана Кутыина, Андрей Бройдо, Антон Кутыин. Берлин, La Jolla, 2001, էջ 43-44,- <http://www.sakharov-center.ru/asfcd/auth/?t=page&num=1698>):

պիտի կանգնի, հսկի: Մեր գյուղը պատմական գյուղ էր, 1918ի ջարդերի ժամանակ թուրքերից շատ է ինքնապաշտպանվել, փորձ ունեինք: Մենք երկու հայկական գյուղերի՝ Նորշենի և Ուշտալի հետ մի գծի վրա էինք, միմյանց հետ պայմանավորվել էինք: Նախկինում այդ երեք գյուղերը մի ընդհանուր կոլխոզ էին, 1988 թվին անջատեցին, ամեն գյուղի վրա մի կոլխոզի նախագահ դրին: Իմաստն էն էր, որ իրար հետ չշփվեին, երեք գյուղի միասնությունն չլինի: Մենք էլ պայմանավորվել էինք, որ եթե հանկարծ հեռախոսակապը կտրվի, գիշերները հարձակումների մասին խարոյկ վառելով միմյանց լուր տանք: Խաղողի չոր ճյուղերը դարսել էինք, կողքը շշով բենզին դրել՝ վտանգի դեպքում վառելու և միմյանց օգնելու համար: Յերեկը վտանգավոր չէր, թե մենք կտեսնեինք, թե հարևան գյուղերից լուր կտային: Հարևան գյուղերում թուրքեր չկային: Մալականների գյուղից՝ Իվանովկայից, զանգում էին: Մալականները: Եղել է՝ ավտոբուսներ լցված թուրքերը եկել են մինչև այնտեղ, բայց Իվանովկան կանգնել է, ասել է՝ չպիտի գնաք, եթե գնաք էլ, իրենք պաշտպանվում են, չէք իմանում, թե վերջն ինչ կլինի: Երկու-երեք անգամ ամբողջ գյուղը տրեվոզա (տազնապ-Հ.Խ.) է բարձրացել, գիշերվա կեսին երեխեքին, ծերերին ասել ենք՝ դուք գնացեք ձորը: Բայց լույսերը չէինք հանգցնում, որ իմանան տներում մարդ կա, իսկ տղամարդիկ մնում էին պոստերում:

Ուղղակի մեր շրջանը բազմազգ շրջան էր, դա թուրքական շրջան չէր, թուրքական գյուղերը մատների վրա կարելի էր հաշվել, երևի մի չորս-հինգ հատ կլինեին: Ընդհանրապես մինչև Շամախի, Շամախուց այն կողմ, թե այդտեղ ադրբեջանցի կոչեցյալը եղել է՝ չգիտեմ, բայց էդ տարածքում, մեր ապրած տարածքում ընդհանրապես թուրք բառը գոյություն չի ունեցել: Հիմնականը իհարկե, հայերն էին, 14 գյուղ կար հայկական, կար մի հատ մալականների գյուղ, կար մի 4-5 հատ լեզգիների գյուղ, մի հատ լախիճ կոչվող ազգության գյուղ կար, և երկու գյուղեր կային, ես ընդհանրապես չգիտեմ, թե դրանց պատմության մեջ ինչպես են կոչում, մենք հափտու/հափթու էինք ասում, հափթու¹: Դա շատ փոքր

¹ Հափութիներ. խոսում են արևելակովկասյան լեզգիական խմբի հափութիերեն լեզվով, ապրում են հիմնականում Ադրբեջանի Ղուբայի շրջանի Հափութ (Напут, Гапут) գյուղում, ինչպես նաև Խաչմասի, Իսմայիլիի շրջաններում և քաղաքներում: 19-րդ. առաջին կեսին Ղուբայի շրջանում կար հափութիական չորս բնակավայր (Ягодынский П.Н. Экономический быт государственных крестьян северной части Кубинского уезда Бакинской губернии, МИЭКБЗКЗК, т.ВЫ, ч.1, Тифлис, 1884, էջ.166), Գյոքչայի և Շամախու շրջաններում՝ հինգ բնակավայր (Абелов Н.А. Экономический быт государственных крестьян Геокчайского и Шемахинского уездов Бакинской губернии, МИЭКБЗКЗК, т.ВЫ, ч.2, Тифлис, 1887, էջ.15), Նուխիում (Շաքի)-երկու բնակավայր (Арасханианц А.А. Экономический быт государственных крестьян Нухинского уезда Елисаветпольской губернии, МИЭКБЗКЗК, т.ВЫ, ч.1, Тифлис, 1887, էջ.19): XIX դ. կեսերին հափութիների մի մասը բնակություն հաստատեց այսօրվա Իսմայիլի և Աղղաշի շրջաններում և հիմնեցին Հափութլու-մելիքլու, Հափութլու-Շեթեւ-Ղաջար, Հափութլու-Մոլլա Իսաղլի և այլ

ժողովուրդ է, միայն Ադրբեջանում կա, երկու գյուղ Իսմայիլիի շրջանում են, երևի մեկ էլ Կուբայի շրջանում հափթունների մի հատ գյուղ կար... Հափթունները մեզ օգնել են, նույնիսկ երեխաներին մի քանի օրով տարել, իրենց տներում պահել են, մինչև վտանգը անցնի: Մի անգամ էլ գիշերը Մոլլա Մաղլի գյուղի հափթունները իրենց մեքենայով եկան, կանանց ու երեխաներին տարան իրենց գյուղ: Հափթունները մեզ աջակցում էին, թե՛, ասենք, ինֆորմացիայով, թե՛ իրենց տեխնիկայով: Տեխնիկան, օրինակ, ամենագնաց, «Վիլիս» որ ասում ենք, այդ մեքենայից, օրինակ, բերեցին: Մարդիկ կային՝ գալիս էին մեզ հետ, անգամ մինչև առավոտը պոստում կանգնում, մարդկանց հետ զրուցում, հոգեբանորեն տրամադրում էին, որ չվախենան, խուճապի չենթարկվեն, քանի որ հարձակում լինելու դեպքում նախ իրենց գյուղերով պետք է անցնեին: Նրանք զգուշացնում էին թուրքերին, որ մեր գյուղով հանկարծ ոչ մեկը չգա, որովհետև մենք չենք թողնելու, որ անցնեն: Ճիշտ է, իրենք էլ էին մուսուլման, բայց արտաքինով տարբեր էին, կապույտ աչքերով, սպիտակ մաշկով, թուրքերի նման սև չէին, եմիշբաշ¹ չէին մի խոսքով:

Կամ թեկուզ լեզգիներ կային, մեր հետ էլ ապրողներ կային: Մեր գյուղում 15-20 ընտանիք լեզգի կար: Հայերեն էին խոսում էդ մարդիկ, հայերի հետ մերված: Ճիշտ է, սկզբում գյուղում չէին բնակվում, բայց հետագայում՝ 1960-ից հետո, արդեն գյուղի մի ծայրամասում իրանց հող էին հատկացրել, իրենք որպես մի թաղ ապրում էին: Գալիս էին մեզ հետ, պոստերին կանգնում էին: Դե զգում էին, որ իրենք փոքրամասնություն են, համախմբվում են, երևի դրանից էր, թե ինչ, շատերը հայերեն էին խոսում: Լեզգիներն արդեն մի մասը չեզոք էին, բայց ովքեր սերտորեն կապված էին հայերի հետ, դեպքերի ժամանակ նրանք ինչով

բնակավայրերը (Ягодынский П.Н. Экономический быт государственных крестьян северной части Кубинского уезда Бакинской губернии, МИЭКБЗКЗК, т.ЫЫ, ч.1, Тифлис, 1884, էջ.166). 19-րդ. 80-ական թթ. Մուշկուրում ապրում էին 1433 հափուլթի (Списки населенных мест Российской империи, т.65, Бакинская губерния, Тифлис, 1870, էջ.96), իսկ Գեոքչայի և Շամախու մարզերում՝ 710 հափուլթի (Абелов Н.А. Экономический быт государственных крестьян Геокчайского и Шемахинского уездов Бакинской губернии, МИЭКБЗКЗК, т.ЫЫ, ч.2, Тифлис, 1887, էջ.15). Բրոկհաուզ-Եֆրոնի հանրագիտարանի տեղեկություններով Ելիզավետպոլի նահանգում 1886-ին հափուլթիները կազմում էին բնակչության 0,21 %-ը (1520 մարդ), իսկ Ղուբայի և Բաքվի նահանգներում՝ 1,2% (2100 մարդ) (http://gatchina3000.ru/big/056/56804_brockhaus-efron.htm): Այսպիսով՝ 19-րդ. ներկայիս Ադրբեջանի տարածքում ապրում էին առնվազն 6.000 հափուլթիներ: Ադրբեջանի պաշտոնական մարդահամարների ցանկում հափուլթիները երբեք չեն ընդգրկվել, սակայն ըստ այլ աղբյուրների, 2005 թվականին կրիզների և ջեկերի հետ միասին հափուլթիներն Ադրբեջանում 10-15 հազար թիվ են կազմել («The Sociolinguistic Situation of the Kryz in Azerbaijan»:<http://istovjavor.tk/naxsko-dagestanskie-narody/kryzy#more-184>; <http://istovjavor.tk/structure/naxsko-dagestanskie-narody>):

¹ Սեխագլուխ, երկարագլուխ:

կարողացել են, աջակցել են: Այդպես մնացել ենք մինչև 1989ի փետրվար ամիսը, մինչև իրենք էլ (իշխանությունները-Հ.Խ.) համոզվեցին, որ մենք հենց այնպես չենք գնալու, մեքենաներ բերեցին, և մենք շարասյունով դուրս եկանք: Տները, անասունները թողել ենք: Մենք, երևի, ադրբեջանի հայկական գյուղերից վերջին դուրս եկողներն ենք եղել: Արդեն Կիրովաբադի հայերն էլ էին գնում: Արդեն լսել էինք, որ բոլոր հայկական գյուղերը գնացել են, Շամխորի, Խանլարի... շրջաններում այլևս հայություն չկար: Հետո, գաղթից հետո, ոմանք ետ են գնացել, հարցեր են ունեցել լուծելու, թեկուզ տան փոխանակություն, թեկուզ պարտքեր են ունեցել, տարբեր կարիքներ: 1989-ի ընթացքում դեռ գնալ-գալ կար: Ես էլ եմ երկու անգամ գնացել: Մեր տեղի լեզգիները, հափթուները կրկին օգնում էին: Իրենց տներում պահում էին, կերակրում էին, չէին թողնում՝ որևէ մեկը ձեռք բարձրացնի: Թաքուն էին պահում, ճիշտ է: Քանի որ այդ գյուղերում գաղթից հետո արդեն Հայաստանից տեղափոխված թուրքեր էին, նրանք չէին ճանաչում, թե իրար հետ ման եկող այդ մարդիկ հայ են, լեզգի են... »¹ :

«Շաքի քաղաքում էդ դեպքը պատահեց նոյեմբերի 21ից 26ը: Ամեն օր միտինգներ էին, առավոտը՝ միտինգ, կեսօրին՝ միտինգ, երեկոյան դեմ՝ միտինգ, պահանջում էին՝ «Հայեր, ռադ եղեք», «մահ հայերին»: Եղանակն էլ էնպես լավ եղանակ էր, արևոտ, սովորաբար նոյեմբերին միշտ ցուրտ էր լինում, այդ տարի շատ լավ եղանակ էր անում: Մեհրիբանյան Կարոյի տները իմ աչքի առաջ վառեցին. մեր տնից երևում էր: Քաղաքի ամենահարուստ հայն էր: Հետո սկսեցին թալանել, ով ինչ հավանեց՝ տանում էր, փողոցով արդեն երևում էր: Մինչև անգամ գդալներ, ամաններ, կաթսաներ հավաքած տանում էին: Երեկոյան կողմ էն մեր մյուս հարևանի տունը վառեցին. երկու տղա ուներ, երկու տուն էր սարքել: Մեկինը վառեցին, մյուսինը հանգրեցին, էլ չվառեցին: Սարգսյան Մուրադ էր անունը, Սարգսյան Մնացական, քույրը Սարգսյան Սվետան էր, այստեղ՝ Հայաստանում, մահացավ: Մեր մեքենան՝ «Ժիգուլի», տարան, վառեցին, հարևանի մեքենան՝ «Օ6», նույնպես տարան: Մեր հարևան թուրքերը՝ Ալահվերդիև Ռաուֆ, Ալահվերդիև Քյամալ, հիմա արդեն չկան, մահացել են, հայտնեցին մեքենաների մասին ջահելներին, դրանք էլ տարան: Ռաուֆը համալսարանում էր սովորում, ավարտում էր արդեն: Իր տատը հայ էր, պապը՝ թուրք, հայրն էլ ուսուցիչ էր Շաքիում: Հայերի տներին կավիճով խաչ էին դնում, որ այդտեղից հայերին հանեն: Մեր տան վրա էլ կար: Նույն Ռաուֆն էր անողը ...Մեր ընտանիքը պատրաստվել էր արդեն, որ առավոտյան պիտի գնանք, գիշերը եկան մեր հետևից: Մի անձրևանոց ենք հազել խալաթի վրայից ու տնից դուրս եկել: Ես եմ, քույրիկս է, հարևաններն են՝ հայր ու աղջիկ, եղբայրս, ողորմածիկը այստեղ մահացավ, իր կինն էր, աղջիկն էր: Չորս օր մնացել ենք մի փոսի մեջ, ծածկված: Իբր թաքնվել էինք: Մի պարսիկ հարևան ունեինք, մեզ

¹ Վաչիկ Թավարյանի հետ ՀՀ Տավուշի մարզի Աղավնավանք գյուղում 2006ի հուլիս 5ին զրուցել է Ա.Հակոբյանը:

համար ուտելիք էր բերում: 4-րդ օրն արդեն պարետային ժամ հաստատվեց և մենք դուրս եկանք: Դուրս եկանք գիշերը՝ ժամը 1ին, տեսանք փողոցում կանգնած ԲՏՌ-ներ կան, ավտոբուսներ կան, լիքը հայեր են... տեղավորեցին ավտոբուսում, ԲՏՌ-ները մեզ տարան կենտրոն: Գիշերը մնացինք մի շենքի մեջ: Ամբողջ գիշեր այդ շենքի ապակիները փշրեցին, քարերով: Ամբողջ գիշեր քարեր էին նետում: Առավոտը շուտ տեսանք զորքը կանգնած, մեքենաները կանգնած, ավտոբուսների մեջ մեզ ճանապարհում էին: Գաղթելիս արդեն անձնական մեքենա չէր մնացել: Ոմանք իրենց մեքանաներով հասցրել էին գնալ, բայց շատերինը տարել էին: Ոմանք լացում էին մեր հետևից, ոմանք քարեր էին գցում, նայած՝ ոնց... Մեր տան բանալին թողեցինք մեր հարևան պարսիկի՝ Այուբի մոտ: Բերեցին մեզ Հայաստան՝ Այրում: Դրանից հետո իմ նախկին աշակերտը՝ Գրիգորյան Էդիկ, հիմա Մոսկվայում է ապրում, ինքն իր մեքենայով էր փախել, դեղին գույնի «Տիգուլի» ուներ, չորս անգամ ինձ տարավ Շաքի ու ետ բերեց: Մենք, դե՛, տներ ունեինք, որ պիտի ծախեինք: 1989-ի հունվարի 6-ին, ապրիլի 13-ին, հուլիսի 6-ից մինչև 12-ը մնացել ենք, որ տները ծախենք, բայց չենք կարողացել: Գնացել եմ տեսել՝ ոչ մի բան չկա տանը, ուղղակի մենակ մի... Իմ նկարները և հայերեն գրքերը: Մի գդալ չգտանք, որ դեղ խմենք: ...Էդ պարսիկը մեր տանը ոչ մի բան չէր թողել, լրիվ տարել էր: Նրա աղջկա հագին իմ մուշտակը տեսա: Բայց տարածը քթից եկավ: Թևը կտրեցին նրա, հետո փոքր տղան սիրահարված է լինում մի աղջկա, քույրը չի թողում նրա հետ ամուսնանա, վիճելիս դանակով խփում սպանում է եղբորը, հայրն էլ աղջկան է սպանում: Երկու զոհ միանգամից... Մեր տները շատ լավ տներ էին, թանկարժեք: Միայն 1993-ին կարողացա վաճառել: Արդեն գնալ-գալ հնարավոր չէր, գնորդը եկավ Թիֆլիս, ես էլ գնացի այնտեղ: 200 հազարանոց տները տվեցի 70 հազար ռուբլով, փողը Թիֆլիսում բանկ դրեցի, այդպես էլ կորավ գնաց՝... : Ճիշտն ասած, Շաքի գնալիս ինձ շատ լավ են ընդունել: ...Ժպտում էին, համբուրում էին, լացում էին, մանավանդ իմ աշակերտները... Շաքիում մի քանի ընտանիք ուղի² կար, ուղի

¹ Նկատի ունի 1993ի ռուբլու արժեզրկումը:

² Ուղի, ուղիներ, ինքնանունը՝ ուղի, լեզուն՝ ուղիբեն, արևելակովկասյան լեզգիական խմբի լեզուներից է: Կովկասյան Աղվանքի պատմության շրջանից ուղիները Կովկասյան Աղվանքի այն բացառիկ ժողովուրդն է, ով տևական դիմադրել է մահմեդականացման և թրքալեզվացման քաղաքականությանը, և մինչև այսօր ուղիական ինքնագիտակցությունը պահել են բացառապես քրիստոնյա մնացածները: Դեռևս 18-19րդ. Շաքիի, Վարդաշենի (այսօր՝ Օդուզական) և Կուտաշենի (այսօր՝ Ղաբալայի) շրջանների 40ից ավելի գյուղերում ապրում էին 50.000ից ավելի քրիստոնյա ուղիներ: Ադրբեջանի բոլոր հակահայկական տրամադրությունները և ագրեսիվ գործողությունները միշտ տարածվել են նաև ուղիների վրա, այդ թվում՝ 1988-92թթ., երբ դեռևս գոյատևող ուղիների մեծ մասը ստիպված էր հեռանալ իր հազարամյակների հայրենիքից: 2002 թ. ՌՖ-ում կար 3721 ուղի (<http://www.perepis2002.ru/index.html?id=17>): Ադրբեջանում այսօր ապրում են ուղիների կիսով չափ մնացած միակ բնակավայրում՝ Նիժում: Ուղիների մասին տես Հ.Առաքելյան,

ընտանիք, նրանք էլ գնացին: Ճիշտն ասած, հիմա էլ չեմ կարող ասել, թե ինչու մենք մինչև վերջ չէինք հավատում, որ այդպես բան կպատահեր: Վստահ էինք, որ Սումգայիթը դիպված էր, անցավ գնաց: Շաքիի համարյա բոլոր հայերն էլ [19]18ի թուրքերի հարձակումներից զոհեր են ունեցել: Իմ ընտանիքը՝ նույնպես: Թուրքերը հարձակվել են հայերի գյուղերի վրա: 40, չէ, 40-ից ավելի հայերի գյուղեր կային: Շագինյան Երվանդ կար, դրա ծնողները իրենց երեք երեխային թողել էին թփերի տակ, փախել, որ երեխաների լացի ձայնից թուրքերը չհարձակվեն ու դրանց կոտորեն: Փախել էին Վրաստան: Իմ հորաքույրն էլ իր երեք երեխաներին այն ժամանակ ջրի մեջ էր գցել, որ լացի ձայնը թուրքերը չառնեն ու չհարձակվեն: Ինքը փախել էր, թաքնվել և հետո եկել եկեղեցում մնացել: Մամիս, իրա քրոջը և եղբորը մի թուրքի մարդ Աշղղա Քյունգուս գյուղում թոնրի մեջ խոտով ծածկել պահել է, հետո ծածուկ ուղարկել Հայաստան: 13 օր ոտով ճանապարհ են եկել, պապաս ու մամաս միասին, Երևանում մանկատանն են եղել ...Հայրս էլ, մայրս էլ մեզ միշտ պատմել են: Բայց մեկ է՝ պատրաստ չէինք»²:

Այս բոլոր օրինակները քաղված են Ադրբեջանի տարբեր վայրերից ու իրավիճակներից փախստական հայերի՝ սեփական կյանքի պատմությունից, բայց բոլորն էլ վկայում են նույն ձեռագիրը՝ հայերին քշել՝ հնարավորություն չտալով իրենց գույքը վերցնելու կամ բնակարանները վաճառելու, փոխանակելու: Նույն այդ օրերին Ադրբեջանի՝ մեծությամբ ու բնակչության թվով

Եղիշե առաքյալի պաշտամունքն ուղիների մեջ և Ուտի գավառի տեղադրության հարցի շուրջ, «Լրաբեր» հասարակական գիտությունների, ՀՀ ԳԱԱ, 1991, #6; Հ. Խառատյան, Ուղիների էթնո-և դավանական պատկանելության որոշ հարցեր (19-20դդ.), Հայկազյան հայագիտական հանդես, Ի հատոր, Պեյրուիթ, 2000; Г.С.Харатян, Этно-конфессиональная характеристика зоны Шеку-Кабала, «Научная мысль Кавказа», 2003, # 3; Հ.Խառատյան, Եղիշե Առաքյալը և նրա առաքելությունը, «Հայոց սրբերը և սրբավայրերը», Երևան, 2001; Հ.Խառատյան, Ուղիների ողիսականը 18-19դդ., (Պատմություն՝ն, էթնիկ գոյատևում՝ն, ինքնահաստատում), Հայոց Մեծ եղեռն-90, Երևան, 2005; Հ. Խառատյան-Առաքելյան, Ուղիների կրօնը եւ Հաւատալիքները ԺԹ.-Ի դարերում, «Հանդես Ամսօրեա», Վիեննա-Երեւան, 2010, էջ 435-495; Հ.Խառատյան, Եղիշե առաքելալի, Գրիգորիսի եւ Կովկասեան Աղուանքի քրիստոնէացման հարցի շուրջ, «Բազմավեպ», Վենետիկ, 2010թ., էջ 19-75; *Харатян Грануш*, Удины: крах всех усилий самосохранения, М.: издательство «Центриздат», 2015:

¹ Շաքիի հայերի 1918–1920թթ. կոտորածների մասին տես «Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918–1920 թթ.»; Հ.Խառատյան-Առաքելյան, Ուղիների ողիսականը; Յուրիկ Դուլյան, Հայ փախստականների խնդիրը Ադրբեջանում (1918թ. մայիս – 1919թ. մայիս), Բանբեր Հայաստանի արխիվների, N 1 (121) 2013, էջ 152-159(<http://www.armarchives.am/UserFiles/File/Banber%20-%2001-2013+.pdf>):

² Շաքի քաղաքի Ձերժինսկի փողոց փակուղի 3, տ. 3 հասցեով նախկին բնակիչ Ելենա Գրիգորի Գասպարյանի հետ ՀՀ Արմավիր քաղաքում 2006ի հունիսի 23ին գրուցել է Ա.Հակոբյանը:

երկրորդը համարվող Կիրովաբադ քաղաքում, որտեղ ապրում էին շուրջ քառասուն հազար հայեր, դեպքերի զարգացումները սպառնում էին երկրորդ սումգայիթով, եթե շտապ լուծումներ չգտնվեին: Սումգայիթյան փորձն արդեն սովորեցրել էր, որ ոչ միայն իշխանությունների վրա հույս դնել չի կարելի, այլև պետք էր զգուշանալ նախ և առաջ հենց իշխանություններից: Այս գիտակցությունը 1988ին դեռևս անորոշ էր, և մարդիկ սեփական կաշվի վրա զգացին, թե ինչ է լինում այն հայերի հետ, ովքեր ամիջապես չեն ենթարկվել տեղահանվելու առաջարկությանը:

Կիրովաբադի հայ բնակչությունը 1988-ի նոյեմբերին նույնպես դեռևս չէր պատկերացում, թե ինչ սպառնալիք է իրենց վրա կախված: Նրանք նույնպես դեռևս հավատում էին, որ ԽՍՀՄը պետություն է, և, որպես այդպիսին, պետք է պաշտպանի և անպայման կպաշտպանի իր անմեղ քաղաքացիներին: Սակայն 1988-ի նոյեմբերի 21-ին Կիրովաբադի Լենինի անվան հրապարակում՝ քաղաքային և կուսակցական իշխանությունների շենքերի դիմաց տեղի ունեցող առավոտյան ցույցին մասնակցում էին կուսակցության քաղաքային կոմիտեի բյուրոյի անդամներ, քաղաքային գործադիր կոմիտեի նախագահ Ս.Վ.Մամեդովը, Կիրովաբադ քաղաքի Քյայայազի շրջանային կուսակցական կազմակերպության առաջին քարտուղար Ս.Հուսեյնովան, քաղաքի խոշոր արտադրական համալիրների տնօրենները, քաղաքի դատախազ Ֆաթալիևը, ներքին գործերի վարչության (նստիկանության) բազմաթիվ աշխատակիցներ և այլ պատասխանատու անձիք, ովքեր խրախուսանքով լսում էին հոետորների «Հայեր, ռադ եղեք» և «Մահ հայերին» կոչերը: Նրանց ներկայությունը ցույցին արդեն իսկ զգուշացում էր: Կեսօրին ցուցարարներից երիտասարդները ավտոճանապարհային ոստիկանության մեքենաների ուղեկցությամբ շարժվեցին դեպի հայկական թաղամաս, իսկ «Հայեր, ռադ եղեք» և «Մահ հայերին» սպառնալիքն արդեն հնչում էր ոստիկանական մեքենաների բարձրախոսներից: Քաղաքն էլեկտրակացված էր, բնակչությունը՝ լարված սպասումի մեջ: Մինչ ցուցարարներից առանձնացած երիտասարդական խումբը Շահումյան փողոցով շարժվում էր դեպի հայկական թաղամաս՝ Թագաշեն (պաշտոնական անունը՝ Կարմիր գյուղ), Շահումյան փողոցի մայրերին շարվել էին ցույցի հոետորներին մի քանի ժամ լսած բնակիչները և սպասում կամ հետևում էին դեպքերի զարգացումներին: Երիտասարդների ձեռքերին երկաթյա ձողեր կային: Որոշ երիտասարդներ փորձեր արեցին դուրս գալ երթից շարքերից, բայց ոստիկանները նրանց ետ վերադարձրին գրոհայինների շարք: Բորբոքված երիտասարդները գրոհեցին հայկական եկեղեցին, Խանլար անունով ոստիկանական մայրի գլխավորությամբ քարեր նետելով տապալեցին քահանային, ջարդուփշուր արեցին նրա բնակարանի գույքը, որպես ավար պոկեցին եկեղեցու խաչը, ջարդեցին № 10 հայկական դպրոցի բակի խորաքանդակը, ճանապարհին խմբով հարձակվեցին ծեծեցին միայնակ մարդու պահեստի փոխգնդապետ Սեմյոն Բաբաբեխվյանին, երկու հարյուր հոգով

հարձակվեցին Օկտյաբրսկայա փողոցի թիվ 55 տան բնակիչ Ռոզա Մելքունյանի տան վրա՝ կողոպտելով այն, իսկ տանտիրուհին սպանվեց երկաթյա խողովակով քունքին հասցված հարվածից: Այդ ընթացքում մարդասպանների այդ խմբի հետ էր Կիրովաբադի Քյափազի շրջանի ոստիկանական բաժնի քրեական հետախուզության պետ Միրբալան: Սպանված կնոջը տեսնելով՝ վերջինս հայտարարեց, որ ոչինչ չի պատահել, բայց ետ կանչեց կատաղած ռիմակը: Ավելի ուշ Ռոզա Մելքունյանի որդի Վլադիմիր Մելքունյանը մոր մահվան մասին դատաքննչական փորձաքննության տեղեկանք ստացավ, որում որպես մահվան պատճառ նշված էր սրտի կաթվածը: Այդ ընթացքում հայկական թաղամասի բնակիչները դուրս թափվեցին տներից և մեծ խմբով դեմ դիմաց կանգնեցին կատաղած բանդայի առաջ: Վերջիններս առաջին իսկ դիմադրությանը բախվելով՝ սպառնալիքներով ետ վերադարձան՝ ճանապարհին քարերով ջարդելով տների ապակիները, իսկ Ֆիդլետով փողոցի №68՝ Ֆիդլետով-Ջափարիձե խաչմերուկում գտնվող Դանիելյանի տունը այրեցին: Երեկոյան հայկական թաղամասը շրջապատվեց զինվորականներով: Լենինի հրապարակում հակահայկական բազմամարդ ցույցը շարունակվում էր՝ ավելի ու ավելի բորբոքելով կրթերը:

Նոյեմբերի 22-ի առավոտյան հայկական թաղամասում գտնվող հայկական եկեղեցու բակն արդեն լեցուն էր ծեծված, դանակահարված, վիրավոր հայերով: Գիշերը գրոհիլ էին ենթարկվել ադրբեջանական թաղամասում ապրող հայ բնակիչների տները: Քաղաքում զինվորականների կողմից պարետային ժամ հայտարարվեց և սահմանափակվեց բնակչության գիշերային տեղաշարժի հնարավորությունը:

Կիրովաբադի «հայկական թաղամասը» ձևավորվել էր 70-80 տարի առաջ՝ 1905–1906-ի հայ-թաթարական ազգամիջյան բախումներից և 1917–1920-ի հայկական ջարդերից հետո: Այդ ժամանակ որոշվել էր, որ քաղաքի հայերն ու թաթարները (ետնագույն ադրբեջանցիները) ապրեն առանձին թաղամասերով: Ուշագրավ է, որ ինչպես հիշյալ երկու, այպես էլ 1980-ականները հեղափոխական ժամանակաշրջաններ էին. Ռուսաստանի 1905–1906-ի հեղափոխական իրավիճակը, 1917-ին Ռուսական կայսրությունում տեղի ունեցած փետրվարյան բուրժուա-դեմոկրատական, ապա հոկտեմբերյան բոլշևիկյան հեղափոխությունը, որից հետո կայսրությունը կազմալուծվեց, և Կովկասում ինքնահռչակվեցին երեք հանրապետություններ՝ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի, իսկ 1980-ականերին ընթանում էր, այսպես կոչված «վերակառուցման հեղափոխությունը», ինչին հաջորդեց ԽՍՀՄ փլուզումը, և Կովկասում կրկին ինքնահռչակվեցին նույն երեք հանրապետությունները:

Ուշագրավ է, որ 1905–1906-ի հայ-թաթարական ընդհարումների և 1917–1920-ի հայկական ջարդերի մասին անհամեմատ ավելի շատ տեղեկություններ կան, քան 1988-ի Կիրովաբադում տեղի ունեցած իրադարձությունների մասին: Անհավատալի է, բայց քսաներորդ դարասկզբի թերթերը շատ ավելի իրազեկ էին

երևույթերի ընթացքին, շատ ավելի կազմակերպված, ճկուն և արագ էին արձագանքում իրադարձություններին, քան զարգացած համարվող քսաներորդ դարավերջի զանգվածային լրատվամիջոցները: Դարասկզբի հայալեզու և ռուսալեզու թերթերի տեղեկությունների միջոցով կարելի է վերականգնել դեպքերի համարյա ամենօրյա ընթացքը¹: Դրան հակառակ 1988-1989-ին Կիրովաբադում կատարվող դեպքերի մասին փաստացի ոչինչ չի հաղորդվել և չի գրվել: Մյուս կողմից՝ նույնքան արագորեն գրվեցին դարասկզբի դեպքերն ու երևույթները վերլուծող գրքեր, բազմաթիվ հոդվածներ²: Մինչդեռ նույնիսկ 1988-ի Սուսգայիթի ջարդերը³, 1988-1989-ի իրադարձությունները, 1990-ի հունվարյան սուկալի ջարդերը⁴, նույնիսկ 1991-ի «Կոլցո» օպերացիան հայկական վերլուծական դաշտում դեռևս սպասում են հետազոտողների անդրադարձին: Իսկ 1988-1990-ին Հարավային Կովկասում տեղի ունեցող ահռելի մարդկային տեղաշարժերի, կրքոտ բախումների, ցասումնալից ցույցերի, սպանությունների և այդ ամենին՝ իշխանությունների ուղղակի կամ անուղղակի մասնակցության

¹ «Մշակ» (1872–1920, Թիֆլիս); «Նոր Դար» (1883–1916, Թիֆլիս), «Աղբյուր» (1883–1918, Թիֆլիս), «Մուրճ» (1889–1907, Թիֆլիս), «Լուսա» (1896–1912, Թիֆլիս), «Արմենիա» (1885–1923, Փարիզ), «Հնչակ» (1887–1915, 1935–1940, Ժնև), «Դրօշակ» (1891–1914, 1925–1934, Ժնև); «*Санкт-петербургские ведомости*» (մինչև [1728 թ.](#) «Вѣдомости», 1728 - [1914 թթ.](#) «С.Петербургскія Вѣдомости», 1914-[1917](#), «Петроградскія Вѣдомости»), «Русское слово» (1895–1918, Մոսկվա); «Биржевые ведомости» (1861–1879 և 1880–1917, Պետերբուրգ); «Тифлисский листок» (1886–1916, Թիֆլիս); «Сын отечества» (1905 թ. հրատարակվում էր «С. О.» անունով, Պետերբուրգ); «Кавказские минеральные воды» (1902–1906, Պյատիգորսկ); «Новое обозрение» (1901–1906, Թիֆլիս); «Знамя Труда» (1918-1919, Բաքու); «Արև» (Բաքու); «Գործ» ամսագիրը (Բաքու), «Бакинский рабочий» (1906-ից մինչև այսօր, Բաքու), «*Борьба*» (1905, Մոսկվա); «Наше время» (1890-1907, Պետերբուրգ), «Աշխատանք» (Բաքու) և այլն:

² А. В. Амфитеатров. Армянский вопрос. СПб., 1906; И. Алибегов. Елисаветпольские кровавые дни пред судом общества. Тифлис, 1906, <http://www.genocide.ru/lib/alibegov/elizavetpole.html> (далее – Алибегов); Г. Е. Старцев. Кровавые дни на Кавказе. СПб, 1907; Ա.-Դ.Ո, Հայթորքական ընդհարումը Կովկասում, Կովկասում (1905-1906 թթ.). (Փաստական, վիճակագրական, տեղագրական լուսաբանություններով), Երևան, 1907; М. С. Ордубади. Кровавые годы, 1911 (<http://www.karabakh-doc.azerall.info/ru/azerpeople/ap061-1.php>); Г. Чалхушьян. Красная книга. Ростов на Дону, 1919; Б. Ишханян. Великие ужасы города Баку. Тифлис, 1920; Դ. Անանուն, Ռուսահայերի հասարակական զարգացումը (1901–1918), հ. Գ, Վենետիկ, 1926 և այլն:

³ Մեծ հաշվով հրապարակի վրա է միայն Ս.Շահմուրադյանի կազմած «Сумгаитская трагедия глазами очевидцев. Ереван, 1989 և Հ.Ուլուբաբյանի, Ս.Զոլյանի և Ա.Արշակյանի կազմած «Сумгаит... Геноцид... Гласность? Ереван, 1990 նյութերի ժողովածուները:

⁴ И. Мосесова, Армяне в Баку: Бытие и исход. Ереван, 1998:

մասին դեպքերին համընթաց՝ շատ չնչին տեղեկություններ են հաղորդվել, եղածի զգալի մասն էլ՝ հաճախ ուշացած և գաղափարախոսական պաթոսով լեցուն: Իսկ Կիրովաբաղի մասին, կարելի է ասել, դեպքերին համընթաց մամուլում որևէ տեղեկություն չի հայտնվել, ճիշտ ու ճիշտ թանձր խորհրդային ավանդույթով, երբ մարդկային մեծ զանգվածներ բախվում էին միմյանց, գորքերի միջոցով ճնշումներ էին իրականացվում, իսկ խորհրդային մամուլը խաղաղ, հաշտ ու համերաշխ գրում էր համագումարների պլանների կատարման մասին: Մինչդեռ հայտարարված «վերակառուցման» ու «հրապարակայնության» ժամանակաշրջան էր, իսկ տեղեկատվության համար «դեպքերն» ավելի քան արժանի էին մեծ ուշադրության: Կոնկրետ Կիրովաբաղում կատարվող դեպքերի շուրջ ինֆորմացիոն շրջափակումը կատարյալ էր:

Նոյեմբերի 22-ին մի խումբ հայեր, հավաքվելով եկեղեցում, Տեր Սահակ քահանայի հետ խորհրդակցելով, որոշեցին ինքնապաշտպանվել: Կիրովաբաղից հայերին իշխանության լեզվով դեռևս չէին առաջարկել «հեռանալ», խորհրդային մամուլը գրում էր հայ և ադրբեջանցի եղբայր ժողովուրդների ավանդական և ընթացիկ բարեկամության մասին, կիրովաբաղցիները նույնիսկ չգիտեին, թե ինչ է տեղի ունենում ադրբեջանահայության այլ հատվածների հետ, բայց «վեցերորդ զգայարանով» հասկացան, որ լուրջ ամպեր են կուտակվում, և կարծես թե որևէ տեղից օգնության սպասելիք չկա: «Ինքնապաշտպանական խումբը» արագ որոշեց քաղաքի ադրբեջանական մասում ապրող հայերին օգնել տեղափոխվելու հայկական թաղամաս, բաժանել հայ ընտանիքների վրա, պահակություն սահմանել քաղաքի հայկական մասի բոլոր թաղամասերում՝ հարձակումները կանխելու կամ դիմադրելու համար, ահրաժեշտ վայրերում բարիկադներ ստեղծել, եկեղեցուն կից նախապատրաստել «դաշտային հոսպիտալ» ծեծվածների համար, «դաշտային խոհանոց»՝ իրենց բնակարաններից վնդված հայերին կերակրելու համար, դեղորայք, տաք հագուստ և մթերք պաշարել, հայկական թաղամասում և եկեղեցու շուրջը կուտակվող հայությանը ամենօրյա տեղեկություններ տրամադրել իրավիճակի շուրջ, կապ պահպանել զինվորական պարետի հետ՝ անելիքները քննարկելու, հրնթացս որոշել անելիքները: Նոյեմբերի 22-ից մինչև դեկտեմբերի կեսերը սույն «նախաձեռնող խումբը» ոչ միայն իրականացրեց հիմնական ինքնապաշտպանական գործողությունները, այլև փաստացի կանխարգելեց և ձգձգեց քաղաքային իշխանությունների որոշումը՝ արագ, անաղմուկ և առանց գլխացավանքի դուրս վոնդել քաղաքի քառասունհազարանոց հայ բնակչությանը և նրանց բնակֆոնդն ու գույքը յուրացնել: Պարետատան հետ բանակցելով՝ նրանք հիսուն մարդու անունով անցազրեր ստացան՝ գիշերը, պարետային ռեժիմի պայմաններում, քաղաք դուրս գալու և հարձակման ենթարկված անօգնական մարդկանց փրկելով՝ հայկական թաղամաս տեղափոխելու համար: Միայն նոյեմբերի 22-ի գիշերը այս մարդիկ, իրենց կյանքը վտանգի ենթարկելով, եկեղեցի են տեղափոխել 77 տարեցների, երեխաների, ծեծված կիսամեռ մարդկանց: Այդպես շարունակվել է

մինչև նոյեմբերի 28-ը: Նոյեմբերի 22ին հայկական եկեղեցում ապաստանելու եկան նաև փախստական ռուսներ, ուկրաինացիներ:

Նոյեմբերի 23-ին հայերի բնակարաններում անջատվում են գազը, էլեկտրահոսանքը, ջրամատակարարումը: Հայկական թաղամասում ապաստանած փախստական հայերի թիվը շուտով հասավ չորսուկես հազարի: Փախած գալիս էին բռնաբարված կանայք, ջարդված, դանակահարված տղամարդիկ, վախից կիսախելագար, պատռտված հագուստով, բոբիկ... Մեծ մասը՝ գանգուղեղի վնասվածքով: Հարյուրավոր ծեծված մարդկանց համար երկրորդ «հիվանդանոցի» կարիք առաջացավ: Որպես այդպիսին «բռնագրավեցին» եկեղեցու կողքի ուսումնարանի շենքը, որտեղ տեղավորեցին առավել ծանր տուժածներին: Կամավորաբար խնամում էին հայ բժիշկներն ու հայ ու ռուս բուժքույրերը, կազմվել են բոլորի «հիվանդության պատմությունները»: Նոյեմբերի 24-ին հրոսակախմբերի գրոհների քարտեզը հասել էր Լենինի պողոտային: Թիվ 87 շենքի բնակչուհի Աննա Ալեքսեյի Իյուլիանան կարողացավ փախչել հայկական եկեղեցի: Նրա բնակարանն էլ, մյուսների նման, կողոպտված էր, ապակիները՝ ջարդված: Բայց Լենինի պողոտայի 93 Դ շենքի բնակչուհի Ռ.Օ.-ն չէր հասցրել փախչել, նրան սարսափելի ծեծելուց հետո բռնաբարել էին... շշով: Կիսախելագարված, արյունահոսող, բոբիկ ու մերկ կնոջը տարել էին ոստիկանական բաժանմունք, որտեղ նրան ծաղր ու ծանակի ենթարկող ոստիկանները ողջ գիշեր ստիպել էին նստած սպասել... անհայտ է՝ ինչին սպասել: Ողջ գիշեր ցուրտ սենյակում մերկ նստած կիսամեռ կինը առավոտյալ լսել է փողոցով անցնող տանկի հռնոյունը և մի կերպ վազել դեպի այն: Երիտասարդ տանկիստը, «Мама, ты армянка?» հարցնելով, վերարկուն նետել է կնոջ ուսերին և հայկական եկեղեցի հասցրել զրահամեքենայով: «Շտապ օգնությունը» հրաժարվել էր կնոջը օգնություն ցուցաբերել: Ջինվորականները ստիպված էին հայկական եկեղեցի տեղափոխել նաև քաղաքացիական հիվանդանոցներում պառկած հիվանդ հայերին նրանց առաջարկվել էր արագ լքել հիվանդանոցի տարածքը:

Հատկապես դժվար օր էր չորրորդ օրը՝ նոյեմբերի 25-ը: Այդ օրը Բաքվի հեռուստատեսությամբ ելույթ էին ունեցել գրողներ Բախտիար Մահմուդ Մահմուդօղլու Վահաբգադեն և Էլչին Իյասօղլու Էֆենդիևը, հատուկ պաթոսով խրախուսել էին աղբբեջանը հայերից մաքրելու գործողությունները, հերոսացրել հրոսակներին: Այդ օրը աղբբեջանական թաղամասում դեռևս թաքնվող հայերի նկատմամբ ջարդերը աչքի էին ընկնում առանձնահատուկ սաղիզմով: Ցերեկը միայն ռուսական բանակի զինվորները կարող էին տանկերով շրջել փողոցներում և փորձել փրկել հայերին, եթե վերջիններս ինչ-որ հրաշքով կարողանային վազքով հասնել տանկերին: Հայտնի էր դարձել, որ գանգվածային ջարդերին մասնակցում են հրդեհաշեջները, ճանապարհային ոստիկանության և նույնիսկ «Շտապ օգնության» աշխատակիցները: Պարետային հսկողությունն իրականացնող զինվորականների կողմից բռնված և ոստիկանական

բաժանմունքներին հանձնվող հրոսակներին անմիջապես ետ էին ուղարկում՝ ջարդերն ու թալանը շարունակելու: Լսելով սպանվածների մասին և տեսնելով հատուկ սաղիզմով ծեծվածներին՝ հայկական թաղամասում հավաքված փախստականները սկսեցին քննարկել հայկական թաղամասում ապրող աղբրեջանցիների հետ նույն կերպ վարվելու անհրաժեշտությունը՝ գուցե դա զսպի հրոսակներին: Դժվարությամբ, բայց հաջողվեց կանխել վրեժխնդրության գործողությունները:

Նոյեմբերի 26ին քաղաքի պարետ Պ.Պ.Պուլեխը հանդիպեց հայկական թաղամասում ապաստանածներին: Վերջիններս միաբերան խնդրում էին, որ որևէ խորհրդային թղթակից գա, իրենց հետ հանդիպի, իրենց վիճակի մասին տեղեկացնի ԽՍՀՄ հանրությանը, ԽՍՀՄ ղեկավարությանը... Հերթական անգամ շրջանցելով տեղեկատվության խնդիրը՝ Պուլեխը հայերին հայտնեց, որ այդ գիշեր միայն բռնաբարություններ են եղել, դանակահարության դեպք կա, բայց սպանվածներ չեն եղել: «Բերման են ենթարկվել» 26 մարդ: «... среди вашего населения, среди армян не было нарушителей, не было задержанных, так держитесь... был задержан злостный нарушитель товарищ Алиев, который был вооружен пистолетом с двумя патронами и имел при себе около пяти тысяч денег в багажнике машины. Его задержали, он находится под следствием. Были задержаны молодые ребята, у которых были обнаружены финские ножи, а те все 140 задержанных с оружием, все под следствием, а всего было задержано 305 человек. Остальные товарищи были допрошены и отпущены»: Ոչ մի կողոպտող, թալանչի, ջարդարար, մարդասպան, հանցագործ..., հայերի ավելի քան հազար տուն ավերած մարդկանցից ոչ մեկը, չնայած պարետային ռեժիմին, չի ձերբակալվել: Իսկ նրանք շարունակում էին քաղաքում շրջել ոհմակով ու... «չնկատվել»: Մարդկանց հարցերին՝ թե ինչու հայերի հեռախոսահամարներն անջատված են, պարետը պատասխանեց՝ արդեն միացված են: «Ո՛չ, միաբերան գոչեցին հավաքվածները, -կապ չկա»: «Կստուգենք, կվերականգնենք...»: Նոյեմբերի 26-ին կողոպտված ու ջարդված բնակարանների թիվն անցավ 1000-ից: Եվ նույն օրը քաղաքի պարետը պահանջեց, որ եկեղեցում հավաքվող ինքնապաշտպանական նախաձեռնող խումբը ցրվի և հայկական թաղամասի փողոցներում սարքված բարիկադները հանվեն: «Թող գնան իրենց տները», - պահանջեց նա: Ջարդված ապակիներով ու դռներով թալանված տները: «Մենք վերահսկում ենք իրավիճակը», - պարետի հայտարարությանն արդեն դառը քմծիծաղով պատասխանեցին:

Մոսկվայից ժամանեցին ԽՍՀՄ դատախազության յոթանասուն քննիչներ: Տուժած հայերի հետ զրույցներում նրանք ասում էին, որ Մուսկովյիթի սպանողի բացահայտման ամենամեծ դժվարությունը լրատվության պակասն էր: Լրատվամիջոցների բացարձակ լռությունն իրենց անելանելի վիճակի մասին հուսահատության էր հասցնում հայկական թաղամասում հավաքված հայերին. «Нас удручало абсолютное молчание в средствах массовой информации о нашем

безвыходном положении. Неужели так и будут молчать? Знают ведь, раз послали следователей из Москвы! А следователи утверждали, что «молчанка» по делу Сумгаита сыграла очень плохую роль. Так почему же молчат сейчас? Мы никак не могли понять, Москва ли заинтересована в молчании, и зачем? Или это влияние Азербайджана на Москву так велико? Было абсолютно непонятно, как можно, как возможно вообще умолчать тотальный антиармянский террор в Азербайджане вот уже седьмые сутки»:

Մինչ Կիրովաբադում ամբողջ թափով ընթանում էին հայկական հալածանքներն ու ջարդերը, իսկ ողջ ԽՍՀՄում, այդ թվում՝ Հայաստանում ԶԼՄ-ները խոնարհորեն քննարկում էին վերակառուցման առավելությունները, նոյեմբերի 25ին Բաքվի «Կոմունիստ», իսկ նոյեմբերի 26ին «Бакинский Рабочий» թերթերում լույս տեսավ տնտեսագիտության դոկտոր Ա.Զարգարովի հոդվածը («Злой умысел, чуждые голоса: Армянские националисты и их покровители сеют яд розни между народами»), որում, բացարձակապես շրջանցելով Ադրբեջանի հայկական բնակավայրերում և կոնկրետ Կիրովաբադում հենց այդ պահին ընթացող հայկական ջարդերը և այդ մասին լրատվամիջոցների համերաշխ լրությունը, գրում է. «У меня нет никаких оснований обвинять средства массовой информации и пропаганды Азербайджана в злонамеренном искажении происходящих в Нагорном Карабахе и вокруг него событий...» և, որպես հայ ժողովրդի անջնջելի ամոթալի մեղք, տեղեկացնում Ադրբեջանի հանրությանը, որ «В армянских колониях за рубежом выдвигаются требования об открытии в крупных странах Запада консульств Армянской ССР, создании в республике национальных воинских частей, солдаты которых проходили бы службу на ее территории. Раздаются голоса о необходимости флага «независимой Армении», провозглашенной в 1918 году и исчисления даты образования республики с того же года»:

Հայաստանի անկախացման կոչերի «ծանրագույն մեղքերի» համար հայերին, իհարկե, պետք էր պատժել, և ԽՍՀՄին «նվիրյալ» Կիրովաբադի հրոսակները նոյեմբերի 27-ին, արյունից և անպատժելիությունից արբած, արդեն շրջում էին հայերից դատարկված քաղաքում՝ փորձելով գտնել թաքնվածներին: Հայկական եկեղեցում այդ օրը գրանցեցին 1120րդ կողոպտված և ջարդուփշուր արված բնակարանի հասցե: Մրանք այն բնակարաններն էին, որոնց տերերը հասցրել էին որևէ կերպ «ընկնել» հայկական թաղամաս: Իրական թվի մասին ոչ ոք պատկերացում չուներ: Այդ օրը հայկական թաղամասում կրկին հայտնվեցին փախստական ռուսներ՝ Լարիսա Յուրայի Պրոխորովան, Լիդիյա Ալեքսանդրի Վելիչկոն, Անժելա Մերգելի Գալկինան, Լյուդմիլա Նիկոլայի Գոնկովիևան, ուրիշներ: Նրանք 36978 ռազմական մասի ավիաարհեստանոցի աշխատակիցներն էին: Պատմեցին, որ հիմա արդեն ցույցերը տեղափոխվել են գործարաններ, պահանջում են «Հայեր և ռուսներ, դուրս գործարանից»: Հայկական եկեղեցուն կից հիվանդանոց տեղափոխեցին ծեծված Եվգենի Տիխոնի

Կոլոսովին: Հայերի նվազելով ջարդարարների հարվածի սլաքն ուղղվել էր ռուսներին: Լուրեր տարածվեցին, որ իր սաղիզմով հատկապես աչքի ընկնող Ջիզան Ալիին՝ Ալի Հուսեյնովին զինվորականները բռնել են և հանձնել ոստիկանությանը: Հայերը համոզված էին, որ թեկուզ ձևի համար աղբբեջանական ոստիկանությունը հետաքննություն կսկսի նրա դեմ, բայց... մեկ ժամ էին պահել ոստիկանությունում, մեկ ժամից նա կրկին գլխավորում էր ջարդարարների խումբը:

Քաղաքի պարետ Պոլեխին փոխարինել էր Վ.Ս.Օմելչենկոն: Եկեղեցու հայերը խնդրեցին իրենց օգնել սննդով ու դեղորայքով, բայց նա պատասխանեց, որ դա իրենց պարտականությունների մեջ չի մտնում: Փոխարենը սպառնաց, որ եկեղեցում հայերի կուտակույր պարետային ռեժիմի խախտում է և առաջարկեց ցրվել: Ու՛ր ցրվել: «Ամսի 22-ից մի շաբաթ անցել էր, եղ Կիրովաբադի կամենդանտը, Օմելչենկո էր ազգանունը, եկավ հայոց մաս ու միկրաֆոնով ասեց՝ «ժողովո՛ւրդ, դուք պետք է թողնեք քաղաքը, հարկավոր է ծերերին և երեխաներին հանել քաղաքից, որովհետև Ադդամի կողմից գալիս է 50 հազարանոց բանակ, մենք չենք կարող դրանց դեմն առնել»¹: Իրականում դա նաև իշխանությունների բարձրաձայնած առաջին կիսապաշտոնական առաջարկն էր՝ հեռանալ Կիրովաբադից: «Ադդամի կողմից 50 հազարանոց բանակի» գրոհի մասին հայտարարությունը վախեցնելու նպատակ ունեցող սուտ էր, իհարկե, բայց քաղաքային իշխանությունները քառասուն հազար հայերին անաղմուկ հեռացնելու ծրագրի իրականացումից արդեն հուսահատվել էին և, չհամարձակվելով գնալ հայկական թաղամաս, զինվորական պարետի համագործակցությամբ սպառնում էին: Մարդկանց մեջ, այնուամենայնիվ, խուճապ սկսվեց, ամեն կերպ փորձում էին փախչելու ելքեր գտնել: Նրանց առաջարկվեց ինքնաթիռներով անվճար տեղափոխություն: Միայն թե պետք էր ստորագրել, որ իրենք կամավոր են գնում և քաղաքային իշխանությունների տնօրինությանն են թողնում իրենց բնակարանները: Ոմանք այդպես էլ արեցին: Սկսվեցին թոհչքները: Առաջին ինքնաթիռներով ուղարկվեցին երեխաներ և երիտասարդ աղջիկներ: Օրական թռչում էր մոտ 1.000 մարդ: Բայց ինքնապաշտպանական «նախաձեռնող խումբը» նոյեմբերի 30ին վճռականորեն առարկեց իշխանությունների այդ առաջարկությանը՝ պահանջելով քննչական կոմիտեի միջոցով կազմել թալանված գույքի և կողոպտված բնակարանների գույքագրում, գործեր հարուցել, ինսպրամարկդերից հայերին վերադարձնել նրանց գումարները, վերականգնել գողացած կամ ոչնչացված փաստաթղթերը, աշխատանքային գրքույկները, չստացված աշխատավարձերը: Նոյեմբերի 30-ին հայկական եկեղեցի հասավ Ալեքսանդր Տարատով անունով մի մարդ, խնդրեց իրեն ելույթի հնարավորություն տալ. «Братья! Сестры! Отцы! Матери! Я сам

¹ Ծատուրյան Սեդայի հետ 09.07.2006 ՀՀ Գյումրի քաղաքի «Մուշ -2», քոտեջներ թաղամասում զրուցել է Թ. Վարդանյանը:

русский, моя жена армянка, я прожил с ней 12 лет, у нас четверо детей. Я прошу вас, поймите меня правильно, мою квартиру разграбили, теперь местные власти пришли ко мне и говорят, что я должен, как русский, написать заявление, что моя квартира была разграблена не азербайджанцами, а армянами...»: Նույն օրը եկեղեցում հավաքվածներին մի հայ կին պատմեց իր տեսածը. «Զգույշ եղեք: Մեր բակում մի քանի աղբբեջանցիների բնակարաններից որոշ գույք էին հանել, թափել բակում, իսկ գույքի տերերը իրենց գույքի մոտ կանգնած կամերաների առաջ պատմում էին, թե ինչպես են հայերն իրենց թալանել»: Ինչպե՞ս զգույշ լինել այդ իրավիճակում, երբ հայերի համար իրենց կորուստներից ավելի թանկ էին դարձել անհասանելի ժուռնալիստները, իսկ քաղաքային իշխանությունները անարգել նախապատրաստում էին «կիրովաբաղյան ջարդերի» իրենց տարբերակը:

«Ինքնապաշտպանական խմբի» վճռականությունը ազդեց և դեկտեմբերի մեկից դադարեցին հայերից պահանջել կամավորաբար հրաժարվել իրենց բնակարաններից, միաժամանակ դադարեցին անվճար թոփչքները: Փոխարենը հաջորդ օրն առաջարկվեց, որ Հայաստան ուղարկվեն ինքնաշեն հիվանդանոցներում գտնվող տուժածները: «Նախաձեռնող խումբը» ծանր ընտրության առաջ հայտնվեց: Մի կողմից իբրև թե քննություն է ընթանում, իսկ ծեծված-ջարդված մարդկանց դեռևս չեն հարցաքննել: Պարզ էր, որ մոսկովյան քննիչներին և քննությանը ցանկալի է անմիջական ֆիզիկական զոհերի հետ գործ չունենալ: Չկան տուժողներ, չկան զոհեր: Մյուս կողմից վերջանում է դեղորայքը, իսկ հիվանդանոցային պարզունակ հնարավորությունները բավարար չեն հիվանդների համար: Դեկտեմբերի երեքին, սակայն, անվճար թոփչքները վերջնականապես դադարեցին: Հասկանալով, որ խուճապահար մարդիկ պատրաստ են ամեն զին վճարելու՝ այդ դժոխքից ազատվելու համար, մեկնելու ցանկություն ունեցողներին զինվորականների ուղեկցությամբ ավտոբուսներով տանում էին օդակայան, եռակի թանկ տոմսեր վաճառում և ինքնաթիռ նստելուց առաջ պահանջում ստորագրել, որ իրենց ոչ ոք չի նեղացրել, չի բռնացել իրենց կամքին, իրենք կամավոր մեկնում են հայրենիք՝ Հայաստան, և որևէ պահանջ իշխանություններից չունեն: Չստորագրողներին ետ էին վերադարձնում: Մեկնողների թիվն անմիջապես նվազեց. թալանված ու զինվորականների օգնությամբ փողոցներից փախած մարդկանց մոտ փող չկար: Դեկտեմբերի վեցին սպառվում են նաև դեղորայքը և ուտելիքը: Դժվարությամբ հաջողվեց պարետին համոզել մեքենա և ուղեկցորդ տրամադրել՝ Գետաշեն գյուղից ուտելիք բերելու նպատակով:

Տեսնելով, որ մեկնող հայերի թիվը նվազում է և ինքնապաշտպանական խումբը համառորեն պնդում է վնասի գույքագրման և հայերի այլ պահանջները կատարելու մասին, բախվելով հայերի կոլեկտիվ կամքին՝ անպայման ԽՍՀՄ քննչական մարմիններին տրամադրել բռնությունների մասին տեղեկությունները, քաղաքային իշխանությունները փոխեցին տակտիկան:

Նրանք սկսեցին համոզել փախստականներին՝ աշխատանքի վերադառնալ: Իսկ դեկտեմբերի յոթին բոլորը լսեցին Հայաստանում տեղի ունեցած զարհուրելի երկրաշարժի բոթը: Նույն պահին զինվորական պարետը երկու մեքենա էր ուղարկել հայկական թաղամաս՝ «պարետային ռեժիմի» կարգը հնարավոր խախտողներին ձերբակալելու: Երկրաշարժի բոթը ավելի, քան որևէ սպառնալիք՝ կոտրեց ինքնապաշտպանվողների կամքը:

Երկրաշարժից հետո քաղաքային իշխանություններին պարզ դարձավ, որ անհնար է այդ պայմաններում, երբ ողջ աշխարհի ուշադրությունը Հայաստանի վրա է, Կիրովաբադի քառասուն հազարանոց հայ բնակչությանը միանգամից քշել ավերված Հայաստան: Դեկտեմբերի տասին Մոսկվայից ժամանած քննչական կոմիտեն տեղափոխվեց քաղաքի ադրբեջանական մաս: Պարզ էր, որ հայերից ոչ մեկը չէր գնա այնտեղ ցուցմունք կամ վկայություն տալու: Քննությունը տապալված էր:

Դեկտեմբերի 13-ին հայերից առաջին համարձակները սկսեցին դուրս գալ աշխատանքի: Դեկտեմբերի 14-ին եկեղեցու բակում կայացավ վերջին հավաքը. «նախաձեռնող խումբը» հաշվետու ելույթ ունեցավ հավաքվածների առաջ և առաջարկեց այսուհետ անհատական լուծումներ փնտրել բնակարանները փոխանակելու կամ տեղափոխվելու հարցերում, և պատրաստակամություն հայտնեց դժվարին իրավիճակներում օգնության հասնել:

Կիրովաբադի չճրագրավորված ինքնապաշտպանությունը մեծ հաշվով խաղաց անսովոր և նույնքան չճրագրավորված դեր. այն կտրուկ փոխեց Ադրբեջանից հայերի տեղահանության տրամաբանությունը: Մեկ այլ հոդվածով կանդրադառնանք 1989-ի զարագացումներին: Կիրովաբադի ինքնապաշտպանության գործընթացի փաստաթղթերին կարելի է ծանոթանալ САМООБОРОНА АРМЯН КИРОВАБАДА В 1988–1989 гг. ГЛАЗАМИ ОЧЕВИДИЦЕВ (25-летию самообороны армян Кировабада посвящается), Составители: Грануш Харатян, Гриша Оганезов, ЕРЕВАН, 2014:

Ամփոփում

1988-1990թթ. Խորհրդային Ադրբեջանից հայերի արտամղման և տեղահանության գործընթացը տեղի է ունեցել իշխանությունների և ադրբեջանական հասարակության ստորին սոցիալական շերտերի համաձայնեցված գործողություններով ու ԽՍՀՄ բարձրագույն իշխանությունների թողտվությամբ, ինֆորմացիոն շրջափակման պայմաններում: Հողվածում քննարկվում են Նախիջևանի Չնաբերդ, Դաշքեսանի Բանանց ու Կուշչի, Իսմայիլիի շրջանի Քյալբանդ և Ղալազա, Ծաքի և Կիրովաբադ քաղաքների հայ բնակչությանը բռնի ուժով տեղահանելու դեպքերը և Կիրովաբադ քաղաքի հայերի ինքնապաշտպանությունը 1988թ. նոյեմբերի 21-ից մինչև դեկտեմբերի 14-ը, ինչը ազդել է հայերի տեղահանության իշխանությունների տակտիկայի վրա:

Депортация армян из Азербайджана. Уроки самообороны армян Кировабада в 1988г.

Грануш Харатян

Резюме

Ключевые слова - Знаберд, Кировабад, депортация армян, самооборона, информационная блокада, комендантский режим, Азербайджан

Процесс депортации армян в 1988-1990гг. из Советского Азербайджана происходил при совместных согласованных действиях властей и социально низких слоев азербайджанского общества, с попустительства высших структур власти СССР, в условиях информационной блокады. В статье рассматриваются случаи силовой депортации армян из сел Знаберд, Нахичевана, Бананц и Кушчи Дашкесанского, Кйалбанд и Галага Исмаилинского районов, городов Шаки и Кировабада, организация самообороны армян Кировабада от 21 ноября по 14 декабря, которое повлияло на тактику властей по депортации армян и изменило ход событий.

Displacement of Armenians from Azerbaijan.

Lessons from the Self-Defence of Kirovabad Armenians in 1988

Hranush Kharatyan

Summary

Key words - Znaberd, Kirovabad, displacement of Armenians, self-defense, informational blockade, curfew, Azerbaijan.

The process of expelling and dislocation of Armenians from the Soviet Azerbaijan during 1988-1990 was carried out through mutually agreed actions of the authorities and lower social classes of Azerbaijani society, with a permission from the highest USSR authorities and in an informational blockade. The article examines the cases of forcible displacement of Armenians from Znaberd village of Nakhijevan, Banants and Kushchi villages of Dashkesan, Qyalband and Ghalaga villages of Ismaili region, and the cities of Shaki and Kirovabad. It also reviews the organization of self-defense of Kirovabad Armenians from November 21 to December 14 of 1988, which had an impact on the tactics of the authorities with respect to the displacement of Armenians.